

ՍՄԶԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ  
ՍՏԵՂԾՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ  
ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻՑ ՅԵՏՈ

Առաջին աշխարհամարտից հետո ստեղծված միջազգային դրու-  
թյան և Անդրկովկասում տիրող քաղաքական կացության ուսումնա-  
սիրությունը խիստ կարևոր է այդ ժամանակահատվածում տեղի  
ունեցող դինամիկ գործընթացների տրամաբանությունը հասկանալու  
առումով: Առաջին աշխարհամարտի մեջ մտած տերությունների շահե-  
րով և Անդրկովկասի աշխարհաքաղաքական նշանակությամբ պայմա-  
նավորված՝ տարածաշրջանային այս խնդիրը ունի միջազգային-  
քաղաքական մեծ հնչեղություն: 20-րդ դարասկզբին ավելի ու ավելի  
ահագնացող են դառնում մեծ տերությունների իմպերիալիստական  
մարտահրավերները մարդկությանը, իսկ փոքր ժողովուրդների  
վտանգված լինելու խնդիրը դրանց շարքում առաջիններից է:  
Ներկայումս բազմաթիվ հետազոտողներ առաջ են քաշում այն  
տեսակետը, թե արդի դարաշրջանում ևս բախումներ կլինեն Անդրկով-  
կասում գերիշխանության հասնելու համար և որ վերջինս միջազգային  
հարաբերություններում ոչ միայն կշարունակի կարևոր դեր խաղալ,  
այլև ձեռք կբերի առանձնահատուկ, անզամ առանցքային նշանա-  
կություն: Աշխարհի վերաբաժանման համար մեծ տերությունների  
ծավալած պայքարը՝ առաջին համաշխարհային պատերազմը, 1918թ.  
մոտենում էր իր ավարտին: Մեկը մյուսի հետևից պարսություն կրելով՝  
պատերազմից դուրս եկան Բուլղարիան, Թուրքիան, Գերմանիան:

Պատերազմից առաջինը դուրս եկավ Բուլղարիան: Բուլղարա-  
կան կառավարությունը ստիպված եղավ հաշտություն խնդրել, որը և  
տեղի ունեցավ 1918թ. սեպտեմբերի 29-ին: Դաշնակիցները իրավունք  
ստացան՝ օգտագործել բուլղարական տարածքը, ճանապարհները,  
կայանները, նավահանգիստները, անզամ գերիներին: Անտանտը  
ձեռնտու բազաներ և ելման դիրքեր նվաճեց Բալկաններում:

1918թ. հոկտեմբերի 27-ին ավստրոհունգարական կառավարու-  
թյունը դիմեց Անտանտին՝ սեպարատ հաշտություն կնքելու համար  
բանակցություններ սկսելու խնդրանքով: 1918թ. նոյեմբերի 3-ին կնքվեց  
զինադադար, համաձայն որի Ավստրո-Հունգարիան դադարեցնում էր  
պատերազմական գործողությունները, ցրում էր բանակը: Դրանից  
հետո ավստրոհունգարական կայսրությունը փլուզվեց:

1918թ. նոյեմբերի 11-ին զինադար է կնքվում Գերմանիայի հետ,  
որով Գերմանիան հրաժարվում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրից:  
Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որ Գերմանիան նպատակ ուներ

օգտագործելու իր հետագա նվաճողական պլանների համար, վերացվեց հենց այն պարզ պատճառով, որ ինքը՝ Գերմանիան, շուտով ծանր պարտություն կրեց և հաղթողներն ավելի դաժան պայմաններ թելադրեցին նրան, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմաններն էին: Դեռևս 1918թ. հոկտեմբերի 5-ին թուրքական կառավարությունը դիմել էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին՝ խնդրելով հաշտություն: 1918թ. հոկտեմբերի 30-ին անգլիական «Ազամեմնոն» հաժանապի վրա կնքվում է զինադադար դաշնակիցների և Թուրքիայի միջև՝ Թուրքիայի համար բավականին ծանր պայմաններով: Զինադադարը կնքվեց դեռևս 1918թ. հոկտեմբերի 27-ին սկսված բանակցությունների արդյունքում, որոնք տեղի էին ունենում Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում՝ անգլիական «Ֆորսայտ» ռազմանավի վրա:

Զինադադարի համաձայն Թուրքիան իր համաձայնությունը տվեց Բաքուն Անտանտի տերությունների կողմից օկուպացիայի ենթարկելու մասին: Մի գիշատիչը իր «ավարը» զիջում էր մի այլ գիշատիչի: Այսպիսով, 1914-1918թթ. Համաշխարհային պատերազմը բացահայտեց իմպերիալիզմի դարաշրջանի արև ներհակությունները: Գերմանական իմպերիալիզմը և նրա դաշնակիցները խորտակիչ պարտություն կրեցին: Հաղթանակեց Անտանտը՝ իմպերիալիստական տերությունների ավելի հզոր խումբը, որը և իրականացրեց քաղաքական քարտեզի վերափոխությունը:

Եթե Խորհրդային Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական զանգվածների դեմ մղվող պայքարում Անտանտի և ԱՄՆ-ի իմպերիալիստների շահերը զուգադիպում էին, ապա գաղութային ավարը բաժանելու գործում սուր հակասություններ կային նրանց միջև: Անգլիական իմպերիալիստները նպատակ էին դրել տեր դառնալ ոչ միայն Անդրկովկասին, այլև Ֆրանսիային դուրս մղել Փոքր Ասիայից և թույլ չտալ ԱՄՆ-ի ներթափանցումը Սերձավոր Արևելք, որը կարող էր սպառնալ Հնդկաստանում և Պակիստանում Անգլիայի մոնոպոլ դիրքերին<sup>3</sup>: ԱՄՆ-ի իմպերիալիստները, որոնք առաջին աշխարհամարտից հետո արդեն փորձում էին «ղեկավար դեր» խաղալ աշխարհում, նպատակ էին դրել թուլացնել Անգլիային ու Ֆրանսիային, նրանց դիրքերը Սերձավոր և Միջին Արևելքում և եվրոպական գործերին միջամտելու իրավունք ստանալ: Այդ նպատակով նրանք փայտիպում էին «ծովից ծով Հայաստան» ստեղծելու և նրան տիրանալու գաղափարը:

Անդրկովկասի նկատմամբ իր սեփական իմպերիալիստական պլաններն ուներ նաև Ֆրանսիան, որը պատրաստել էր «գաղտնի» նախագիծ, որով Անդրկովկասը պետք է վերածվեր Եվեյցարիայի նման մանր նահանգների միության, որը պետք է գտնվեր ֆրանսիական պրոտեկտորատի տակ: Նույնիսկ Իտալիան, որի «ազգային շահերի» և «քաղաքական ամբիցիայի» հետ Անդրկովկասը կապ չուներ /այդպս կարծում էր անգլիական պրեմիեր Քերզոնը/, պատրաստվում էր

անգլիական գորքերը Անդրկովկասից դուրս բերելու դեպքում 12 հազար զինվոր տեափոխել այնտեղ: Իսկ Թուրքիան, պատերազմում պարտություն կրելով, ատամներն էր սրում և սպասում հարմար առիթի՝ նորից թափանցելու Անդրկովկաս: Թուրքիան ոչ առանց հիմքի համոզված էր, որ մուսավաթական Ադրբեջանը կդառնա իր հենարանը՝ երկրամասն իր գերիշխանությունը հաստատելու համար: Մուսավաթականները իրենց հերթին հույսեր էին կապում թուրքերի հետ՝ ջանալով Կովկասի մուսուլմանական ժողովուրդներին միավորել իրենց դրոշի տակ և հաստատել իրենց տիրապետությունը:

Գերմանիան դեռևս պատերազմի տարիներին պլաններ էր մշակում՝ Անդրկովկասը վերածելու «չեզոք պետության», որտեղ առաջին ջութակի դերը պատկանելու էր վրաց մենշինիկներին, որոնց վրա հենվելով՝ նա պետք է ապահովեր իր գերիշխանությունը երկրամասում: Վրաց մենշինիկները հույսեր էին փայտիայում, որ Գերմանիայի հովանու տակ կստեղծեն իրենց «անկախ» պետությունը, որի սահմանները կտարածվեն Սոչիից մինչև Արդահան և կձգվեն Սև ծովի հարավարևելյան ափերով մեկ: Չի կարելի մտածել, թե Անտանտի ու ԱՄՆ-ի իմպերիալիստական շահերը ներգաշեակ էին Անդրկովկասում: Սակայն նրանց առայժմ միավորում էր գերմանաթուրքական բլոկի վտանգավոր պլանները կանխելու ընդհանուր շահագրգռվածությունը<sup>1</sup>: Միջազգային իրադրության ահա այսպիսի պայմաններում էլ ստորագրվեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Այն կնքվեց Խորհրդային Ռուսաստանի, իսկ մյուս կողմից՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի միջև, 1918թ. մարտի 3-ին:

Փաստորեն, համաձայն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի, Ռուսաստանը զիջում էր գերմանական բլոկին Կարսը, Արդահանը, Բաթումը, Բելոռուսիայի մի մասը, Մերձբայթյան երկրները: Ռուսաստանի կորցրած տարածքները կազմում էին մոտ. 1և1/2 մլն 50և1/2 բնակչությամբ: Այդ պայմաններում Անդրկովկասյան կոմիսարիատը, մերժելով մասնակցել Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններին, իսկ այնուհետև չընդունելով Անդրկովկասի վերաբերյալ այդ պայմանագրի կետերը, որոշեց անջատ բանակցություններ սկսել Թուրքիայի հետ Տրապիզոնում<sup>4</sup>: Բրեստի հաշտության պայմանագիրը կնքելուց հետո Տրապիզոնի բանակցությունները կարող էին ձեռնառու լինել միայն Թուրքիային, քանի որ Մեյմի պատվիրակությունը ոչ իրավական, ոչ ռեալ ուժ չունեի՝ թուրքերին ստիպելու ընդունել հաշտության պայմանագրի ցանկալի պայմանները<sup>5</sup>:

Այսպիսով, Տրապիզոնի կոնֆերանսում թուրքերը մի կողմից պահանջում էին անհապաղ իրագործել Բրեստի պայմանագրի՝ Բաթումի, Կարսի, Արդահանի մարզերին վերաբերող պայմանները, որոնց ճակատագիրը պետք է որոշվեր հանրաքվեի միջոցով, մյուս կողմից թուրքերը պահանջում էին Անդրկովկասն անկախ հայտարարել.

որպեսզի կարողանային հող նախապատրաստել Անդրկովկասի նկատմամբ իրենց զավթողական պլաններն իրականացնելու համար: Մերժելով Անդրկովկասյան պատվիրակների բոլոր առաջարկները՝ թուրքական պատվիրակությունը 48-ժամյա վերջնագիր ներկայացրեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ընդունելու և Անդրկովկասը «անկախ» հայտարարելու պահանջով: Անդրկովկասյան պատվիրակությունն այդ մասին տեղյակ պահեց իր կառավարությանը, որը, սակայն, համաձայնություն տվեց զիջել միայն Կարսի մարզը և Արդվիկի օկրուգը մերժելով զիջել Բաթումը: Հետևեց Թուրքիայի նոր վերջնագիրը՝ նույն պայմաններով, և քանի որ պատասխանը Թիֆլիսից ուշացավ, Չխենկելին պատվիրակության անդամների ընդհանուր համաձայնությամբ ամբողջությամբ ընդունեց Բրեստի հաշտության պայմանագիրը: Բայց դա արդեն չէր բավարարում թուրքերին, որոնք մտադիր էին խախտել նաև 1877-1878թթ. Ռուս-թուրքական սահմանը և ուսումնական գործողությունները փոխադրել Անդրկովկասի խորքերը: Սեյմն ընդհատեց բանակցությունները և պատվիրակությանը ետ կանչեց Տրապիզոնից՝ պաշտոնապես պատերազմի մեջ մտնելով Թուրքիայի հետ, որը շուտով ավարտվելու էր Անդրկովկասյան ֆեդերատիվ Հանրապետության /որը հռչակվել էր 1918թ. սպրիլի 22-ին/ գործերի պարտությամբ և ավելի ծանր հաշտության /Բաթումի պայմանագիր/ ստորագրմամբ: 1918թ. ապրիլի սկզբներին, ջախջախվելով թուրքական զորքերից և կորցնելով ոչ միայն Բաթումի մարզը, այլև Քուրթայիսի նահանգի որոշ մասերը, վրաց մենշևիկները, որոնք գերակշիռ դեր ունեին Անդրկովկասյան Սեյմում, իրենց մուսավաթական արբանյակների հետ համախոհությամբ որոշեցին իրագործել Տրապիզոնի կոնֆերանսում թուրքերի ներկայացրած պահանջները /այսինքն՝ ճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, ինչից ելնելով ճանաչել Կարսի ու Բաթումի մարզերը և հռչակել Անդրկովկասի անկախությունը/ և նոր բանակցություններ սկսել՝ հաշտության պայմանագիր կնքելու համար: Իսկ դրա համար անհրաժեշտ էր նախ՝ հռչակել Անդրկովկասի անկախությունը, ապա հանձնել Կարսի մարզը<sup>6</sup>: Այնպես որ 1918թ. մայիսին Անդրկովկասն արագ քայլերով գնում էր դեպի քայքայում: Օրեցօր սաստիկանում էին հակամարտությունները կովկասյան ժողովուրդների միջև, որոնցից վրացիները գաղտնի որոնում էին գերմանացիների հովանավորությունը, ադրբեջանցիները բռնել էին թուրքերի փեշից և քաշում էին դեպի Բաքու, որն այդ ժամանակ բոլշևիկների ձեռքին էր, իսկ հայերը մնացել էին միայնակ և օրհասական պայքար էին մղում թուրքական զորքերի դեմ<sup>7</sup>:

1918թ. Անդրկովկասում ծավալված դասակարգային և ազգային հարաբերությունների առանձնահատկություններին մեկը կենտրոնախույս ուժերի ակտիվացումն էր: Մենշևիկների, դաշնակցականների, մուսավաթականների տարանջատված քաղաքականությունը հանգեց-

րեց մեծագույն աղետների երկրամասի ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի համար<sup>6</sup>։ Ուստի, Թուրքիայի հետ շուտափույթ հաշտության պայմանագիր կնքելու նպատակով նա որոշեց վերսկսել Տրապիզոնում ընդհատված բանակցությունները։

Անդրկովկասյան կառավարությունը և հրամանատարությունը այն կարծիքին էին, որ ստանալով այն ամենը, ինչ նախատեսված էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, թուրքերը կանգ կառնեն և պատերազմին վերջ կդրվի<sup>21</sup>։ Բանակցությունների ժամանակ եռանդուն կերպով քննարկվում էր այն հարցը, թե ինչպես վարվել Բաքու քաղաքի հետ, թե գորքերն ինչպես շարժել Բաքվի դեմ, որպեսզի իրենց ձեռքը վերցնեն Անդրկովկասը և այնտեղից թափանցեն Թուրան։ Նրանց գործը բարդանում էր այնքանով, որ 1918թ. գարնանը Անդրկովկասում գոյություն ուներ 2 իշխանություն՝ մեկը Անդրկովկասյան կոմիսարիատն էր ու Բաքուն<sup>9</sup>։ Որպեսզի հեշտացնեն իրենց գործը, թուրքական իմպերիալիստները Անդրկովկասյան Սեյմին «առաջարկեցին» երկրամասն անկախ հայտարարել։ Թուրքերի ու մուսավաթականների ճնշման տակ այդ ծանր օրերին Սեյմը գնաց բացահայտ դավաճանության<sup>10</sup>։

1918թ. ապրիլի 22-ին Սեյմը որոշում ընդունեց Անդրկովկասն անկախ հայտարարել, իսկ Կարսը հանձնել էին դեռևս ապրիլի 12-ին։ Հարկ է նշել, որ Թուրքիայի հետ հարաբերություններում դա Անդրկովկասյան կառավարության կատարած երրորդ սխալն էր։ Իսկ առաջին սխալը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չճանաչելը և Թուրքիայի հետ բանակցությունների մեջ ներքաշվելն էր, երկրորդը՝ Տրապիզոնի բանակցությունների խզումը /մարտի 30/։

Անդրկովկասի անկախացումը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ երկրամասի ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի համար։ Հմտորեն օգտագործելով Անդրկովկասի իշխանությունների թույլ տված սխալը՝ թուրք ագրեսորներն անտեսեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը՝ հայտարելով, թե այժմ «Անդրկովկասն անկախ է»։ Սիա այսպիսի պայմաններում գերմանաթուրքական բռնիք «խաղաղության» բանակցություններ սկսեց Անդրկովկասյան Սեյմի հետ, որոնք հանգեցրին 1918թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագրին։ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չճանաչող Անդրկովկասյան Սեյմը ավելի ծանր պայմաններով և ավելի մեծ տերիտորիալ զիջումներով կնքեց Բաթումի պայմանագիրը։ Բաթումի կոնֆերանսի առաջին իսկ նիստում անդրկովկասյան պատվիրակության նախագահը հայտարարեց, որ սկսվող բանակցությունները պետք է դիտել որպես Տրապիզոնի բանակցությունների ուղղակի շարունակություն, և որ դրանց հիմքում պետք է դրվի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը։ Բայց Խալիլ բեյը տեղնուտեղը և ամենավճռակյան ձևով մերժեց անդրկովկասյան պատվիրակության կողմից առաջարկված բանակցու-

թյուններ վարելու հիմքը: Նա հայտարարեց, որ Օսմանյան կայսրությանը չի կարող այլևս ղեկավարվել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմաններով, քանի որ Անդրկովկասն արդեն ինքնուրույն պետություն է, ուստի Բրեստի պայմանները չեն կարող տարածվել նրա վրա: Թուրքական պատվիրակությունը նշում էր, որ Տրապիզոնի կոնֆերանսից հետո շատ բան է փոխվել և թուրքական կառավարությունն այլևս չի կարող սահմանափակվել այն տարածքային ձեռքբերումներով, որոնք նախատեսված էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով: Գրավելով Հայաստանի տարածքների զգալի մասը՝ թուրքերն այժմ ձգտում էին նվաճել ողջ Անդրկովկասը /և հատկապես Բաքուն, քանզի նրանց հիմնական նպատակը Բաքվի գրավումն էր/ և Հյուսիսային Կովկասը: Հետագա ինտերվենցիայի համար որպես պատրվակ նրանք այժմ հորինեցին հեքիաթ այն մասին, թե «հարյուր հազարավոր թուրքեր ու մահմեդականներ Բաքվում և նրա շրջակայքում կրում են անխիղճ ավազակների՝ այսպես կոչված հեղափոխականների արյունոտ լուծը»: Իրենց հավատակիցներին փրկելու համար թուրքական վերջնագրում առաջ էր քաշվում Անդրկովկասի երկաթուղային ողջ ցանցը թուրքական զորքերի տրամադրության տակ դնելու պահանջը և Օսմանյան կայսրության և անդրկովկասյան հանրապետության միջև ընկած սահմանի նոր «ճշտման» անհրաժեշտությունը: «Սահմանների ճշտման» տակ ենթադրվում էր Օսմանյան կայսրությանը անհպաղ միացնել Նախիջևանի գավառը՝ ներառյալ Օրդուբադը, Շարուր-Ղարալագյազի կեսը, Մուրմալուի ամբողջ գավառը, Էջմիածնի գավառը, Երևանի գավառի կեսը, Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասը՝ Ալեքսանդրապոլ քաղաքով և Ախալքալաքի ողջ նահանգը: Այս վերջնագրին պատասխանելու համար թուրքական պատվիրակությունը Բաթումում 72 ժամ տվեց՝ սկսած մայիսի 26-ի երեկոյան ժամը 8-ից: Թուրքական նոր վերջնագիրը մահացու հարված էր Անդրկովկասյան Սեյմին: Այստեղ սուր պայքար ծավալվեց վերջնագրին պատասխան տալու հարցում: Մուսավաթականները գտնում էին, որ պետք է այն անհապաղ ընդունել, դաժնակցականները լրիվ մերժում էին այն, իսկ վրաց մենչիկները ձգտում էին Թուրքիայի հետ իրենց համար ձեռնառու հաշտության պայմանների հասնել հայկական տարածքների հաշվին: Այդ տարաձայնությունները երևան էին եկել Բաթումի կոնֆերանսի հենց սկզբից: Տակավին թուրքերի կողմից նոր վերջնագիր ներկայացնելուց առաջ Սեյմի պատվիրակության տարբեր ֆրակցիաները իրարից զաղտնի սեպարատ բանակցություններ էին վարում Խալի բեյի հետ:

Թուրքական վերջնագիրը ճակատագրական եղավ Անդրկովկասյան հանրապետության համար: Վերջնագիր ներկայացնելուց հետո նրանք հաջորդ քայլ արեցին: Նրանց ճնշման տակ և մուսավաթականների համառ պահանջով Սեյմը ցրվեց և երկրամասը բաժան-բաժան արվեց: Սեյմի միջոցով Անդրկովկասը Ռուսաստանից անկախ հայտա-

րարելուց հետո 1918թ. մայիսի 26-ին Թիֆլիսում գումարվեց Անդրկովկասյան Սեյմի վերջին ողբերգական նիստը, որտեղ վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցության պարագլուխներից Մերեթելին արեց հետևյալ հայտարարությունը. «Դժբախտաբար, գոյություն չունի այլևս Անդրկովկասյան միությունը և, փաստորեն, չկա մի ընդհանուր ներկայացուցչական մարմին, ուստի սեյմը պետք է հայտարարե, թե ինքը հրաժարվում է իր վրա դրված լիազորություններից ու ցրվի»<sup>11</sup>: Վրացիների պնդումի վրա Սեյմն ընդունեց մի բանաձև, որն ասում էր. «Նկատի ունենալով, որ պատերազմի ու խաղաղության խնդրում երևան եկան հիմնական տարակարծություններ Անդրկովկասի անկախ հանրապետությունը կազմող ազգերի միջև, որով անհնար է դառնում ամբողջ Անդրկովկասի համար մի հեղինակավոր իշխանության գոյությունը, Սեյմն արձանագրում է Անդրկովկասի քայքայման փաստը և հայտարարում չեղյալ իր լիազորությունները»:

Անդրկովկասյան հանրապետության կազմալուծումը թեև անպատշաճ էր թուրք պատվիրակության համար, սակայն հանկարծակյիի չբերեց նրան: Խալիլ բեյը հայտարարեց, որ այժմ ինքը վերջնագիր կներկայացնի Անդրկովկասյան հանրապետությունը կազմող 3 ժողովուրդներին առանձին-առանձին:

1918թ. մայիսի 26-ի կեսերին Սեյմը ցրվեց: 5 ժամ հետո նույն այդ սրահում տեղի ունեցավ վրաց Ազգային խորհրդի նիստը՝ Նոյ ժողովանիայի գլխավորությամբ, որ և բեմադրեց Վրաստանի անկախության ծիսակատարությունը: 1918թ. մայիսի 27-ին Թիֆլիսի քաղաքապետարանի բաց պատուհանից կոմս Շուլենբերգը Վրաստանը հռչակեց Գերմանիայի պրոտեկտորատի տակ գտնվող անկախ հանրապետություն: 1918թ. մայիսի 28-ին Գերմանիայի ներկայացուցիչ ֆոն Լոսովը վրաց պատվիրակության հետ պայմանագիր ստորագրեց գերմանական պրոտեկտորատի տակ գտնվող անկախ վրացական պետության ճանաչման մասին<sup>12</sup>: Այսպիսով, նկատի առնելով Վրաստանի «ինքնավարությունը»՝ հովանավորության տակ վերցնելու մասին գերմանացիների հավաստիացումները և ստանալով թուրքերի համաձայնությունը, 1918թ. մայիսի 26-ին վրաց ազգային խորհուրդը առաջինը ընդունեց թուրքական վերջնագիրը և հռչակեց Վրաստանի անկախությունը:

Մինչ չայոց ազգային խորհրդում խմորումներ էին տեղի ունենում, 1918թ. մայիսի 27-ին անկախ հայտարարվեց «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետությունը», որին հենց այդ ժամանակ թուրքերը առաջին անգամ կոչեցին «Ադրբեջան»: Այդ նոր պետության կենտրոնը ժամանակավորապես՝ մինչև Բաքվի գրավումը, պետք է լիներ Գյանջան: Այսպիսով, Անդրկովկասյան Սեյմի անդամների միջև եղած ներհակությունները, ընդհանուր համաձայնության գալու անկարողությունը հանգեցրին նրան, որ 1918թ. մայիսի 26-ին՝ այսինքն իր գոյության 47-րդ օրը, անդրկովկասյան «պետական» կազմավորումը

տրոհվեց երեք <<անկախ>> մասերի<sup>13</sup>: 1918թ. մայիսի 26-ին Վրաստանը, նույն թվականի մայիսի 27-ին Ադրբեջանը, իսկ մայիսի 28-ին Հայաստանը անկախացան: Մեյմի ցրումով վերջ տրվեց Անդրկովկասի քաղաքական ու տարածքային ամբողջությանը: Մեկը մյուսի հետևից Վրաստանն ու Ադրբեջանը հռչակվեցին անկախ հանրապետություններ՝ Անդրկովկասը բաժանելով միմյանց միջև, իսկ առյուծի բաժինը շնորհ անելով Թուրքիային: Այդ արդեն կատարված բաժանումը շուտով պետք է ամրագրվեր Թուրքիայի և երկրամասում ստեղծվող անկախ հանրապետությունների միջև կնքվելիք անջատ պայմանագրերում<sup>14</sup>: Անդրկովկասն ազգային հանրապետությունների բաժանելը մեծապես հեշտացրեց թուրք գավթիչների գործը, որոնք ձգտում էին օր առաջ տեղ դառնալ Բաքվի նավթին և Կովկասի հարստություններին: Երևաք չէին թաքցնում իրենց պանթուրքական հեռու գնացող նպատակները, որոնց իրականացման համար, անշուշտ, շատ կարևոր էր Անդրկովկասի մասնատումը: Փաստաթղթերը վկայում են, որ թուրքական նկրտումների նոր ալիքը Գերմանիան և Ավստրո-Հունգարիան ընդունեցին զգուշավոր և առող մոտեցմամբ, առանձին դեպքերում՝ նույնիսկ դիմադրությամբ: Փոխվեց Գերմանիայի վերաբերմունքը Թուրքիայի աշխարհակալական ախորժակի նկատմամբ<sup>15</sup>: Պարզորոշ դարձան Գերմանիայի քաղաքական և ռազմական նպատակները Անդրկովկասի նկատմամբ: Եվրոպան և Ասիան կամրջող և ռազմավարական իշխող դիրք գրավող երկրամասից կարելի էր շարժվել դեպի Պարսկաստան, Անդրկովկասյան երկրամաս և Միջին Ասիա, Աֆղանստան, նույնիսկ Չինաստան: Դրա ապացույցը գերմանական բանակի գլխավոր շտաբի 1918թ. մշակած քարտեզ-ուղեցույցն էր: Օդեսա-Բաթում ծովային և Բաթում-Բաքու, Բաթում-Ալեքսանդրապոլ-Չուլֆա երկաթուղիները ամենակարճ ճանապարհն էին դեպի Պարսկաստան: Անդրկովկասում սրվում էր պայքարը ազդեցության ոլորտների համար: Գերմանիայի ցանկությունն էր՝ իր ազդեցությունը տարածել Վրաստանի վրա, այն դարձնել հենակետ և այնտեղից շարժվել ավելի հեռու՝ դեպի հայկական Լոռի, Փամբակ, որտեղ կային պղնձահանքեր և հարուստ անտառներ: Գերմանիան Վրաստանից պահանջում էր հայտարարել անկախություն՝ խոստանալով իր հովանավորությունը արտաքին թշնամիների դեմ, ինչպես նաև դնել պատմական Վրաստանի աահմանների վերականգնման հարցը: Օգտվելով Գերմանիայի սլաշտպանությունից՝ Ա. Չխենկելին իր հերթին վրացական տարածք էր համարում Արդահանը և Կարսի մարզի մի մասը: Համարելով այդ գավառները <<Վրաստանի օրինական սեփականությունը>>՝ Չխենկելին կարծում էր, որ դրանք պետք է վերադարձվեն վրացիներին: Այս տեսակետը պաշտպանում էր նաև Գերմանիան:

Այսպիսով, նույնիսկ առաջին աշխարհամարտի ավարտից հետո միջազգային լարված իրադրությունը չթուլացավ: Ճիշտ է, Գերմանիան և

նրա դաշնակիցները /Թուրքիա, Բուլղարիա, Ավստրո-հունգարիա/ պարտություն կրեցին, և քաղաքական քարտեզի վերափոխությունն իրականացրեց Անտանտը, սակայն պարտվողները հարմար ափսօս էին ստեղծում՝ իրենց նվաճողական պլանները իրականացնելու համար: Չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ նրանցից յուրաքանչյուրի նվաճողական ծրագրերի մեջ առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում Անդրկովկասի գրավումը: Եվ հարկ է նշել, որ նրանցից յուրաքանչյուրը պատրաստվում էր տիրանալ Անդրկովկասին՝ օգտագործելով վերջինիս ազգությունների միջև գոյություն ունեցող ներհակությունները: Ճիշտ է, այս իրադրության սրայմաններում Անդրկովկասի նվաճման համար պայքարում էին Օսմանյան Կայսրությունը, Կայզերական Գերմանիան, Անտանտի տերությունները, սակայն Թուրքիան ղեկավարվելով պանիսլամիզմի և պանթուրքիզմի ռազմատենչ զադափարախոսությամբ, օգտվելով իր աշխարհագրական դիրքից, ռազմական հնարավորություններից, գործակալների լայն ցանցից, հաւելնս նկավ ռազմական ինտերվենցիայի կազմակերպման և իրականացման գլխավոր դերում: Իսկ ներքին պայքարով ու երկպառակություններով ջլատված անդրկովկասյան կառավարությունը, որ հենարան չունեւր երկրի ներսում, ի վիճակի չէր դիմադրություն կազմակերպել Անդրկովկասը նվաճող ցանկացողների դեմ:

#### Ծանոթագրություններ

1. Ա. Հ. Հարությունյան, առաջին համաշխարհային պատերազմի ռազմաքիվանագիտական պատմություններից /1914-1918թթ./, Երևան 1983, էջ 344:
2. Գ. Ա. Գալոյան, Պատմության քառուղիներում, Երևան 1982, էջ 215:
3. Գ. Ա. Գալոյան, Չերոսական մայիսից-հաղթական նոյեմբեր, Երևան 1980թ. էջ 25:
4. Հայկական հարց հանրագիտարան, էջ 443. Երևան 1996:
5. Մարգարյան Ե., Թուրքիան և կրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, էջ 353. Երևան 1964:
6. Է. Ա. Ջոհրաբյան, Ազգամիջյան կռիվները Երևանի ևահանում 1918թ., Երևան 2000, էջ 90:
7. Գ. Ա. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ, Երևան 1999, էջ 25:
8. Ա. Հ. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան 1984:
9. Х. А. Бадалян, Закавказье в период германо-турецкой интервенции, Ереван 1965г. стр. 53.
10. Ջր. Ռ. Մինոյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան 1991թ., էջ 302:
11. Ս. Վլադյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան 1993, էջ 158:
12. Ա. Օհանջանյան, 1915թ. անկերթելի վկայություններ, Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին, Երևան 1997, էջ 147:
13. Ջ. Ս. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դուռաստանի առաջ, գիրք 2, էջ 119:
14. Ա. Եսայան, Հայաստանի միջազգային իրավական դրությունը, Երևան 1967, էջ 13:
15. Հ. Ա. Ավետիսյան, Հայոց ազգային միասնության հարթակը 1918թ. մայիս, 1998, էջ 63: